

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՊԱՐՏԱԴՐՎԱԾ ՍՈՒԻՑԻԴՆԵՐ

ԿԱՄՈ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Վերջին տարիներին սուիցիդների քանակն աշխարհի շատ երկրներում ահագնացող չափերի է հասել, ավելին՝ երևույթը երիտասարդացել է: Իհարկե այն ունի իր պատճառները: Օբյեկտիվ պատճառակալության մեջ կարևորվում են երկրագնդի բնակչության աճը, կյանքի լարված ընթացքը, տարաբնույթ հիվանդությունները, իսկ սուբյեկտիվ պատճառակալության բովանդակությունը բազմամակարդակ է, որի բացահայտմանն են միտված տարբեր գիտական ուղղությունների ջանքերը, այդ թվում նաև՝ հոգեբանական գիտության: Սովորաբար ենթադրում են, որ մարդը ինքնասպանության դիմում է ախտաբանական, սահմանային և հարաբերականորեն հանգիստ հոգեվիճակներում: Առաջին երկու հոգեվիճակների մասին շատ է գրվել, այդ թվում նաև մեր հետազոտությունների շրջանակներում, և հանգել ենք այն եզրակացության, որ մինչև անգամ սահմանային հոգեվիճակում կատարված սուիցիդների մեխանիզմում ինչ-որ չափով առկա է ախտաբանական բաղադրամաս: Մեր հետազոտությունները ցույց են տվել, որ սահմանային խանգարման հետ մեկտեղ՝ հաճախ առաջ են գալիս այլ ծանր ախտանիշներ, որոնցից է ինքնաքայքայող և սուիցիդալ վարքը: Եթե անձը սահմանային խանգարմանը զուգահեռ ունենում է նաև դեպրեսիա, նրա մեջ սուիցիդալ մտքերի կամ փորձերի վտանգն ավելի է մեծանում: Այդ է պատճառը, որ ինքնասպանության սահմանման մեջ ներառել ենք նաև սահմանային հոգեվիճակ հասկացությունը: Կարծում ենք, որ անձի սահմանային հոգեվիճակը ոչ միայն հոգեբանական, այլև միաժամանակ հոգեախտաբանական կատեգորիա է, որում ընդգրկվում են ասթենիկ, օբեսիվ, սենեսթոպատիկ, հիպոխոնդրիկ, դեռեալիզացիոն, դեպրեսոնալիզացիոն խանգարումները: Սահմանային վիճակին են դասվում նաև սոմատոֆորմ խանգարումները (հոգեկան սոմատիզացիայի երևույթները): Սոմատոֆորմ խանգարումներին ընդունված է դասել այն ներտրիկ բնույթի գանգատները, որոնք բնորոշ են այս կամ այն սոմատիկ հիվանդությանը, սակայն որոնց դեպքում սոմատիկ հիվանդություններ չեն նկատվում: Սոմատոֆորմ հասկացությունը հոմանիշ է օրգան ներդրողին (կարդիոներոզ, վեգետոներոզ...): Այս խանգարումները հիմնականում ուսումնասիրվում են ֆենոմենոլոգիական մեթոդով: Սահմանային նյարդահոգեկան փոփոխությունները

ներոտիկ ռեգիստրի այն հոգեկան փոփոխություններն են, որոնք ուսումնասիրվում են հիմնականում կլինիկա-կատամնեստիկ մեթոդով, ներոտիկ սինդրոմների օրինաչափությունների հերթափոխության, այսինքն՝ հոգեկան փոփոխությունների պաթոկլինեզի, սինդրոմոկլինեզի կամ սինդրոմոտաքսիզմի հետազոտման ճանապարհով:

Այդ տեսակետից վերոնշյալ հոգեվիճակների համատեքստում առավել վիճահարույց են հարաբերականորեն հանգիստ հոգեվիճակներում իրականացված սուիցիդները, որոնք համեմատաբար խորությամբ չեն ուսումնասիրվել: Նման սուիցիդները անվանել ենք պարտադրված և առանձնացրել հետևյալ տեսակները.

1. ավանդույթով պարտադրված,
2. օրենքով պարտադրված,
3. հիվանդությամբ պարտադրված,
4. տնտեսական անհաջողություններով պարտադրված,
5. քրեական ենթամշակույթով պարտադրված,
6. քաղաքական իրավիճակի փոփոխմամբ պարտադրված,
7. նշանակալի անձի կորստով պարտադրված:

Մրանք ունեն մեկ ընդհանուր օրինաչափություն. առկա է պարտադրման գործոնը: Սուիցիդը դառնում է կյանքի ծանր իրադրությունից դուրս գալու «արդարացված ելք»: Ընդ որում, նման սուիցիդները գոյություն են ունեցել անցյալում, կան նաև ներկայում և կլինեն ապագայում, եթե խորությամբ չուսումնասիրվեն գիտության կողմից, և չձեռնարկվեն կանխարգելիչ միջոցառումներ: Այդ է պատճառը, որ մեր առաջարկված սահմանման մեջ ինքնասպանության այլ տեսակների հետ սուիցիդի պարտադրված տարբերակը նույնպես արտացոլված է: Մենք գտնում ենք, որ ինքնասպանությունը հոգեբանական դեզադապտացիայի հետևանք է, երբ անձը հոգեկանի ախտաբանական կամ սահմանային վիճակում ինքնակամ (ներծին կամ արտածին ազդակներից դրդված) դիմում է լետալ ավարտով աուտոդեստրուկտիվ գործողությունների: Մա ինքնասպանության ընդհանրացված սահմանումն է, որն ամփոփում է ն՝ հոգեկան հիվանդների, և՛ հոգեպես առողջ անձանց ինքնասպանությունները: Հոգեպես առողջ անձանց ինքնասպանությունը սահմանում ենք որպես շարունակական դեզադապտացիայի կամ աֆեկտի հետևանքով անձի սահմանային հոգեվիճակում լետալ ավարտով այնպիսի աուտոդեստրուկտիվ գործողություն, որի դեպքում այն դիտվում է որպես իրավիճակից դուրս գալու ելք, դիմացինին պատժելու միջոց, ուշադրություն գրավելու եղանակ և այլն, սակայն ոչ անգիտակից և անվերապահ ձգտում դեպի մահը:

Առաջադիր խնդիրների լուծման համար ձևավորել ենք մեթոդների հետևյալ համալիրը՝ պատմահամեմատական, հետահայաց վերլուծության, հոգեբանական աուտոպսիայի, փաստաթղթերի ուսումնասիրման ավանդական կամ որակական, կոնտենտ վերլուծության կամ

քանակական: Կիրառել ենք սոցիոլոգիական, ինքնաազդեցիկ ուսումնասիրման, Լյուբան-Պլոցի սուիցիդալ ռիսկի որոշման հարցաթերթիկներ (հարցարաններ): Արժևորել ենք գրույցը՝ կլինիկական, տիպական հարցազրույց, անհատական հարցազրույց, դիտումը՝ բաց, ընդհատումներով, մոնոգրաֆիկ: Կատարել ենք նաև գրականության վերլուծություն, որը նպաստել է հետազոտական ծրագիրը հստակեցնելուն, մեթոդիկաների ընտրությունը հիմնավորելուն:

Երևույթը հասկանալու համար ուսումնասիրել ենք նմանատիպ սուիցիդների պատմական արմատները, որոնցում առավել շեշտվում են ավանդույթով պարտադրված ինքնասպանությունները: Ընդ որում, պարտադրված սուիցիդներն ունեն շատ երկար նախապատմություն և շատ կարճ գիտական պատմություն: Սուիցիդը, ըստ էության, զուտ մարդուն բնորոշ երևույթ է: Մարդը սովորել է զրկել իրեն կյանքից նախքան անիվի գյուտը և կրակը սանձահարելը, հետևապես ինքնասպանության առաջին դեպքերը վերաբերում են նախապատմական ժամանակներին: Ո՛չ կարիճը, որը զրգոված վիճակում կարող է խայթել ինքն իրեն, և ո՛չ էլ վանդակում ապրող կենդանին, որը հրաժարվում է կերից ու իրեն դատապարտում մահվան, չեն գործում գիտակցորեն, և դա էլ մարդու և կենդանիների վարքի գլխավոր տարբերություններից է: Ժան-Պոլ Սարտրը նշել է. «Մարդը կենդանիներից տարբերվում է նրանով, որ կարող է ընդհատել իր կյանքն ինքնասպանությամբ»: Հայտնի է, որ նախապատմական ժամանակներում, երբ նոր էին միայն ձևավորվում խոշոր համայնքային-ցեղային միությունները, նման ինքնասպանությունները զուտ պրագմատիկ, սոցիալական բնույթի էին և նպաստում էին ցեղի գոյատևմանը: Պատմության մեջ առաջին սուիցիդալ ակտերը նախնադարյան հասարակության մեջ սովի տարիներին երեխաների և ծերերի ինքնասպանություններն էին: Ինչպես նկատում ենք, պարտադրման գործոնը այս պարագայում որոշակի խմբի անձանց մղում է ինքնասպանության՝ նպաստելով մարդ տեսակի պահպանմանը և հետագա զարգացմանը:

Պարտադրված ինքնասպանությունները երկար ժամանակ ավանդույթի ուժով էին: Ծերացած վեստգոթերն իրենց նետում էին «Նախնյաց լեռան» գագաթից, էսկիմոսները, զգալով մոտալուտ մահը, հեռանում էին սառչելու տունդրայում: Դարեր շարունակ Հնդկաստանում այրի կնոջ ինքնահրկիզումը մեռած ամուսնու հետ ոչ ոքի չէր զարմացնում (սաթի): Անտիկ շրջանում տարածված էր աստվածներին զոհ մատուցելու ծեսը, և կարևորվում էր, որ անձը ինքնակամ ընտրի ինքնազոհությունը: Ավանդույթի ուժով սուիցիդի են դիմել հռոմեական կայսրերը և պաշտոնավորները իշխանության համար մղված պայքարում: Այդպիսի «պատիվ» է բաժին ընկնել Օտոնին, Ներոնին, Մարկոս Անտոնինոսին և Եգիպտոսի թագուհի Կլեոպատրային: Հին Հռոմում հանցագործները կարող էին ընտրել կա՛մ մահապատիժ, կա՛մ ինքնասպանություն: Այդ

նպատակով հատուկ թույն էր պահվում: Նման պարագայում մեկ անգամ ևս շեշտվում է մարդկության կողմից ստեղծված պարտադրված ավանդույթի նշանակալիությունը, որը կարծես թե հասնում է մշակութային պահանջմունքի աստիճանի՝ ուղղորդելով անձի վարքը:

Մարդասիրության զարգացմանը զուգընթաց՝ սուիցիդալ ակտերը դրվատանքի են արժանացել, ընդունվել և ըմբռնվել են որպես մարդկային կամքի ազատ դրսևորում: Թ. Մորը գտնում էր, որ ինքնասպանությունը չի հակասում մարդու բնական իրավունքին և հոգևորականությանն ու արդարադատությանը կոչ էր անում չքննադատել այն: Անրի Մարտենը նշում էր, որ Գալլիայում առաջնորդների թաղումը արյունալի հեկաթոմբ էր. ծառաները հետևում էին մահացածին, նրանց էին միանում նաև հավատարիմ զինվորները, որոնք տրվում էին կենդանի հրկիզման: Հավայան կղզիներում թագավորի մահից հետո նրա մերձավորները պետք է իրենց կյանքին վերջ տային: Բարտոլիմը իր գրքում գրում է, որ դանիական զինվորները անպատվություն էին համարում մեռնել անկողնում՝ հիվանդությունից կամ ծերությունից, և դիմում էին ինքնասպանության:

Պարզվում է, որ սուիցիդն ընդունված ավանդույթ էր նաև անտիկ Հայաստանում: Մ. Խորենացին «Հայոց պատմություն» աշխատության մեջ նշում է. «Որքան բազմություն մեռավ Արտաշեսի մահվան ժամանակ՝ նրա սիրելի կանայք, հարճերը և մտերիմ ծառաները, և ինչպես բազմատեսակ շքեղ պատիվներ մատուցեցին դիակին, քաղաքակիրթ (ազգերի) կարգով, և ոչ թե բարբարոսների նման»¹:

Պատերազմական պայմաններում ինքնագոհողության հիմքում ընկած էին իդեալների ուժը, հավատը, իսկ երբեմն էլ՝ խորը անձնական դրդապատճառները՝ ցանկանալով հերոսության միջոցով մնալ պատմության մեջ²: Բյուզանդացի պատմաբան Լև Դիակոնը, պատմելով տավրոսկիֆների (այդպես էին անվանում հարավային սլավոնացիներին) մասին, գրում է, որ նրանք երբեք կենդանի չէին հանձնվում իրենց հակառակորդին:

Ուրարտական արձանագրության մեջ նշված է, որ երբ Ասորեստանի թագավոր Սարգոն Երկրորդը թալանում է Մուսասիրի (Մուծածիր) տաճարը, առևանգում Խալդ աստծո և նրա կնոջ՝ Ուրուբանի աստվածուհու արձանները, Վանի թագավոր Ռուսա Առաջինը (մ.թ.ա.713 թ.), չկարողանալով տանել իր պետությանը հասցված վիրավորանքը և չկարողանալով ետ բերել այդ արձանները, պարտադրված ինքնասպան է լինում: Հայտնի է, որ Պոնտոսի արքա Միհրդատ Եվպատորը (Հայոց Տիգրան Բ թագավորի աները) Հայաստանում աճող տարբեր բույսերից թույլներ է պատրաստել: Հետաքրքիր են պատմիչների տվյալներն այն մասին, որ Միհրդատը (Ք.ա. 63 թվականին), չցանկանալով գերի ընկ-

¹ **Սովսես Խորենացի**, Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմ. և մեկնաբանությունները Ստ. Մալխասյանի, 1981, էջ 229:

² Տե՛ս **Иулияйна Пурич-Пейкович, Душан Й. Дуньич**. Суицидальное поведение. Самоубийство подростков. М., 2000, էջ 30:

նել հռոմեացիներին, թունավորել է իր դստերը, հարեմի բոլոր կանանց և ինքն ընդունել մահացու քանակի թույն³: Ամիանոս Մարկելինոսը փաստում է, որ Արշակ Երկրորդը Անհուշ բերդում ներքինի Դրաստամատի կազմակերպած խնջույքից հետո, չկարողանալով տանել իրեն հասցված նվաստացումները և չդիմանալով կոտանքներին, ինքնասպան եղավ: Մտաբերենք պատմական փաստը. 1920 թ. թուրք-հայկական պատերազմի ժամանակ հայոց բանակի ձախորդություններից հուսահատ՝ զորավար Մազմանյանը Կարսում ինքնասպանություն գործեց գորքի առջև: Մարդարապատի հերոսներից Պողոս Բեկ-Փիրումյանը (Դանիել Բեկ-Փիրումյանի եղբայրը), դժգոհ լինելով իշխանությունների վարած քաղաքականությունից, Երևանի Անգլիական այգում 1921 թ. ինքնասպանություն է գործել՝ կրակելով բերանի մեջ⁴:

Նախկին Խորհրդային Միությունում անհատի պաշտամունքի տարիներին շատ պետական գործիչներ դիմեցին նման սուիցիդի՝ իրենց անունը չարատավորելու համար:

Պարտադրված սուիցիդների ևս մեկ տարբերակ է այն, որ ինքնասպանության դեպքերը միջնորդավորված բնույթի են: Այդ տեսակետից հատուկ հետաքրքրություն են ներկայացնում պատերազմական պայմաններում կանանց բռնաբարության դեպքերը: Հակառակորդի կնոջը տիրանալը խորհրդանշում էր յուրահատուկ հաղթանակ: Նման ձևով հաղթանակած կողմը պարտվածին ենթարկում էր ստորացման: Կինը, ենթարկվելով պղծման, իր ընտանիքի անդամների կողմից դառնում էր օտարված և հալածված: Իսկ այդ դեպքում նրան վիճակված էր ինքնասպանության ճանապարհը: Նա, կորցնելով պատիվը, կորցնում էր ամեն ինչ: Փաստորեն այս դեպքում կինը դառնում էր կրկնակի գոհ: Պատերազմի ժամանակ գերմանացի ուսուցիչն իր աշակերտներին պատգամել էր. «Եթե ձեզ պղծեն, պետք է դիմեք ինքնասպանության»: Եվ Բեռլինում այդ դասարանի աշակերտների գրեթե կեսը 1945 թվականին ինքնասպան եղավ՝ նետվելով Շպրե գետը⁵:

«Իսլամական պետություն» խմբավորման անհաբեկիչները 2014 թ. հունիս-օգոստոս ամիսներին քրդերի և եզդիների բնակավայրերը գրավելուց հետո դաժան հաշվեհարդար էին տեսնում բնակիչների հետ, թալանում նրանց ունեցվածքը և բռնաբարում աղջիկներին ու կանանց: Ինչպես հաղորդում է քրդական «Rudaw» գործակալությունը, Սինջարում քուրդ և եզդի աղջիկները, չդիմանալով այդ անպատվությանը, պարտադրված ինքնասպանություն էին գործում:

Արևմտյան Հայաստանում 1915 թվականին Ցեղասպանության տարիներին մեծ թվով հայ կանայք իրենց պատիվը փրկելու համար նետվեցին մոլեգնած գետերը. «Գաղթի վիթխարի զանգվածը իր հետևից

³ Տե՛ս Ե. Վարդանյան, Կ. Նազարեթյան, Դատական բժշկություն, Եր., 1995, էջ 323:

⁴ Տե՛ս Ս. Բարխուդարյան, Հայոց պատմություն, Եր., 2002, էջ 97:

⁵ Տե՛ս Կ. Կուլայնա Սուրիչ-Սեյակովիչ, Դուշան Կ. Դունիչ, նշվ. աշխ., էջ 77:

արդեն զգում էր 40 գլխանի սև դևի շունչը...: Հետևից՝ դևը, առջևում՝ վարար Բանդի մահի (Բերկրի) գետը: Որքան երեխաններ, կանայք ու աղջիկներ դարձան այդ գետի զոհը: Գարասեֆեյան ընտանիքի մայրը փախչում էր իր 18 տարեկան աղջկա և հինգ փոքրիկների հետ: Աղջկա պատիվը թուրքերից փրկելու նպատակով աղջկա և հետևից կախված երեխաների հետ նետվում է գետը, և բոլորը կուլ են գնում ալիքներին: Նույն կերպ է վարվում Միրաքյան ընտանիքի մայրը՝ երեք փոքրիկ զավակներով: Այսպես շատերը... »⁶:

Հայրենական մեծ պատերազմի ժամանակ գերի ընկնելու վտանգի դեպքում խստորեն պահանջվում էր դիմել ինքնասպանության (Ի. Վ. Ստալինի 1942 թ. № 227 հրամանը): Սա օրենքով պարտադրված սուիցիդի եզակի օրինակներից է: Այս դեպքում անձը պարտադրված էր ընտրելու ինքնակամ մեռնելու տարբերակը: Իսկ եթե գերվում էր, ապա հայտնվում ազատության մեջ, նրան գնդակահարում էին՝ պիտակավորելով որպես հայրենիքի դավաճան, իսկ պատերազմից հետո այդ մարդկանց աքսորում էին Սիբիր ընտանիքով մեռնելու: Ինչպես տեսնում ենք, նման պարագայում ինքնասպանությունը միակ «արդարացված» ելքն էր:

Հիվանդությամբ պարտադրված սուիցիդների համար ավելի էական է հիվանդության զարգացման գործոնը: Հիվանդները չեն ադապտացվում իրենց վիճակին՝ ենթադրելով, որ մահն անխուսափելի է, որն էլ նրանց անընդհատ ստիպում է հարմարվել նոր, անբարենպաստ փոփոխություններին՝ առաջացնելով մեծ սթրես, մարդուն առավել զգայունակ դարձնելով սուիցիդի նկատմամբ: Այսպիսի դեպքերում մարդիկ գերադասում են ինքնասպան լինել, քան պայքարել օրեցօր զարգացող հիվանդության դեմ՝ տառապելով հոգով ու մարմնով: Դա վերաբերում է հատկապես քաղցկեղային հիվանդություններին, որոնց ընթացքը առավել տանջալի է, իսկ ելքը՝ մահացու, մանավանդ որ ինքնասպանությունը հուսահատության հետևանք է: Ի դեպ, Զիգմունդ Ֆրոյդի մահը նույնպես պետք է դիտել որպես պարտադրված ինքնասպանություն: Նա 16 տարի շարունակ տառապում էր ծնոտի չարորակ ուռուցքով, ուստի նրա պահանջով իր աշակերտ Մակս Շուրը Ֆրոյդին ներարկեց մորֆինի մահաբեր չափաքանակ: Մեկ այլ օրինակ. 2013 թ. հունիսի 14-ին ինքնասպան եղավ գրող Վրեժ Իսրայելյանը: Նա վատառողջ էր, և դեպքից մի քանի օր առաջ «Նաիրի» բժշկական կենտրոնում հետազոտվելիս պարզել էր, որ հիվանդ է արդեն խորացած քաղցկեղով: Գրողի հարազատները պատրաստվում էին նրան տեղափոխել արտասահման՝ բուժումը կազմակերպելու նպատակով: Կարելի է ենթադրել, որ նա այս քայլին է դիմել պարտադրված՝ հարազատներին սպասվելիք դժվարություններից ազատելու համար: Գրասեղանի վրա հայտնաբերվել է նաև նամակ, որում Վ. Իսրայելյանը ինքնասպանությամբ

⁶ Ռ. Ա. Մարկոսյան, Հայրենիքի օտարացած ճամփաներով, Եր., «Աստղիկ», 2004, էջ 139:

յունից առաջ գրել է, որ շնորհակալություն է հայտնում Աստծուն լավ կլին, լավ որդի, լավ թոռնիկներ, եղբայր և ընկերներ ունենալու համար ու ամենքից ներողություն է խնդրել. «Չեմ ուզում ինքս ինձնից զզվել, նոր հեռանալ, մնաք բարով»: Նամակի մոտ դրված էր նաև իր հեղինակած «Վաղ թե ուշ» գիրքը:

Պատմությունը փաստում է, որ պարտադրված սուիցիդները բնորոշ են եղել նաև համաճարակների և համավարակների ժամանակ:

Հայ իրականության մեջ հետաքրքիր է Մխիթար Հերացու «Ձերմանց մխիթարութիւն» աշխատությունը (1184 թ.), որտեղ բազմաթիվ տեղեկություններ կան միջին դարերում Հայաստանում տարածված մալարիայի, տիֆի, ժանտախտի, բնական ծաղկի, տուբերկուլյոզի և այլ հիվանդությունների համաճարակների մասին: Է. Ջեյդելը, անդրադառնալով այս հարցին, գրել է, որ թեև ինքը «Հերացուն չի համարում մանրէաբանության նախակարապետ, սակայն օբյեկտիվ և անհերքելի փաստ է, որ մինչև մանրէաբանության դարը ոչ մի բժիշկ չի օգտագործել ինֆեկցիոն գործընթաց արտահայտող տերմին, որի բովանդակությունը իրականությանն այնքան մոտ լինի, ինչպես այդ արել է Մխիթար Հերացին»⁷: Նա խոսել է այդ հիվանդություններին ուղեկցող երևույթների, այդ թվում նաև տարբեր դեստրուկցիաների մասին⁸:

Համաճարակների ժամանակ պարտադրված սուիցիդները դրսևորվել են հիմնականում երեք մեխանիզմով.

1. Անտիկ շրջանում և միջին դարերում կամավոր պարտադրված, աստվածներին զոհ մատուցելու նպատակով՝ երևույթը դիտարկելով որպես մարդկային մեղքերի համար պատժից խուսափում:

2. Ավելի ուշ ժամանակներում հիվանդության հետևանքով օրգանիզմի ֆիզիկական և հոգեբանական հյուծման պատճառով տառապանքից խուսափելու նպատակով: Փաստորեն, մարմնական հիվանդությունը անձր հյուծող և ասթենիզացնող գործառույթ է ձեռք բերում և մեծացնում սուիցիդի նկատմամբ գերզգայնությունը՝ հիվանդին մղելով սուիցիդալ ակտի:

3. Առավել ուսումնասիրված են հիվանդության ահագնացող չափերով պայմանավորված՝ սահմանային անձանց խուճապային վարքի պատճառով պարտադրված սուիցիդները: Այն ծագում է ամբոխային վարքի արդյունքում՝ որպես հիպերբոյիզացված դրդապատճառ:

Չինաստանի Հուբեյ նահանգի Ուհան քաղաքում կորոնավիրուսի նոր տեսակի համաճարակի բռնկումից ընդամենը օրեր անց մարդիկ սկսեցին խոսել համավարակի մասին, իսկ գիտնականների ոչ այնքան դրական կանխատեսումները է՛լ ավելի նպաստեցին խուճապի տարածմանը: Ներկայումս վարակը ահռելի չափով տարածվել է աշխարհի շատ երկրներում, այդ թվում նաև Հայաստանում:

⁷ Տե՛ս **Оганесян Л.** История медицины в Армении, ч. II. Ер., 1945, էջ 121:

⁸ Տե՛ս նույն տեղը:

Կարծում ենք՝ նման պայմաններում այլ տեսակի սուիցիդների քանակը խիստ նվազում է, իսկ հիվանդությանը պարտադրված ինքնասպանությունների թիվը՝ աճում: Այստեղ գործում են դեստրուկտիվ գրգռիչների սումացիայի կամ տրանսֆորացիայի մեխանիզմները: Բացի այդ, մեր դիտարկումները ցույց են տվել, որ կորոնավիրուսը, բացի կոնկրետ օրգան համակարգերի վրա ազդելուց, մեծապես ախտահարում է նաև կենտրոնական նյարդային համակարգը, հատկապես գլխուղեղը, որի հետևանքով առաջանում է մահվան տագնապ, մահվան նկատմամբ գերարժևորված դիրքորոշում: Կորոնավիրուսը հանգեցնում է անձի կոգնիտիվ ունակությունների խանգարմանը. թուլանում է մտածողության ճկունությունը, սուժում այլընտրանքային օբյեկտիվ որոշում կայացնելու հնարավորությունը: Տվյալ դեպքում տերմինալ հիվանդությունը մահը վերածում է ակնհայտ հասանելի իրականության, որը կարող է հիվանդին պարտադրել խուսափել ահագնացող տագնապից և ցավից՝ դիմելով դեստրուկտիվ վարքի ծայրահեղ ձևին: Նման վարկածը պահանջում է գիտական լայն հետազոտական հիմնավորում, որին ձեռնամուխ է եղել մեր գիտական խումբը: Տարբեր հետազոտություններում ընդգծվում է, որ գերտագնապը՝ որպես բնավորության գիծ կամ սուր հոգեվիճակ, հանգեցնում է բարձր ռիսկի սուիցիդալ վարքի⁹: Հայաստանում նման առաջին սուիցիդի դեպքը գրանցվեց 2020 թ. հունիսի 30-ին. Արտաշատի բժշկական կենտրոնում կորոնավիրուսային հիվանդության դեմ բուժում ստացող 55-ամյա հիվանդը ցած էր նետվել հիվանդատենյակի պատուհանից՝ ստանալով ծանր վնասվածքներ:

Հիվանդանոցի սպասարկող անձնակազմի բնորոշմամբ՝ հիվանդը ուներ տարաբնույթ ֆոբիկ վիճակներ և օբսեսիվ-կոմպուլսիվ խանգարում: Այստեղ պետք է հաշվի առնել նաև հարմարողական գործընթացների և անձի խանգարումները. հատկապես սուիցիդի հակված են առոցիալ, նարցիս, հիստերիկ և անանկաստ անձինք:

Տնտեսական անհաջողություններով պարտադրված սուիցիդների դեպքում ինքնասպանությունը դիտվում է որպես իրադրային երկընտրանքի ընդունելի լուծում: Հետազոտվող Ա. Ս.-ն, որ բավականին երկար ժամանակ համարվում էր հաջողակ գործարար, կուտակել էր մեծ քանակությամբ ֆինանսական պարտքեր և փորձել էր ամենատարբեր ճանապարհներով դուրս գալ այդ ճգնաժամային վիճակից, սակայն ապարդյուն: Իր և ընտանիքի անդամների նկատմամբ զգալով ֆիզիկական դաժան վտանգ՝ դիմել էր մահվան ելքով ինքնասպանության: Փաստորեն, այստեղ դրսևորվել է նաև սուիցիդի փախուստ տիպի անձնային իմաստը, որտեղ կոնֆլիկտի էությունն անձնային կամ կենսաբանական գոյությանը սպառնացող վտանգն է, որին հակադրվել է «բարձր ինքնարժեքը»: Սուիցիդի իմաստն այստեղ այն է, որ մարդը փախչում է

⁹ Տե՛ս «Напрасная смерть: причины и профилактика самоубийств». М., 2005, էջ 77:

սպառնալիքից՝ ինքնատչնչացման ճանապարհով: Ցավոք, նման տիպի սուիցիդները ներկա ժամանակներում գերակշիռում են: Հատկապես պետք է նշել լուդոմանիայի հետևանքով դրսևորված սուիցիդները: Հետագոտվող Մ. Լ.-ն պարբերաբար հաճախում էր կազմիններ՝ փորձելու սեփական բախտը: Ի դեպ, սկզբնական շրջանում հաջողությունը հաճախակի էր ժպտում նրան, որից նա ավելի էր ոգևորվում և մեծ ֆինանսական ռեսուրս ներդնում, մինչև անգամ մի քանի անձանցից այդ նպատակով խոշոր պարտքեր էր վերցրել: Մակայն ժամանակ առ ժամանակ պարտվում էր և կորցնում հսկայական գումար: Այդպես կորցրեց սեփական բնակարանը, մեքենան, իսկ կինը երեխաների հետ հեռացավ: Պարտքը ձնագնդի նման աճում էր, իսկ այդ վիճակից դուրս գալու ելքը դառնում առավել աղոտ: Եվ ձմռան մի առավոտ նրան գտնում են կախված քաղաքի բարձրահարկ շենքերից մեկի տանիքում:

Նշանակալի անձի կորստով պարտադրված սուիցիդների ժամանակ խաթարվում է մարդու կյանքի նորմալ ընթացքը: Հնարավոր սուիցիդին, որպես կանոն, նախորդում է երկարատև վիշտը: Հուղարկավորումից հետո առաջիկա մի քանի ամիսների ընթացքում նկատվում է իրականության մերժում, շրջապատող միջավայրի, ապագայի նկատմամբ թշնամական վերաբերմունք, սոմատիկ, տագնապային խանգարումներ, ծանր դեպրեսիվ վիճակ: Այսպիսի դեպքերում սուիցիդը դառնում է յուրահատուկ միջոց, որն օգնում է ազատվել անտանելի հոգեկան ցավից և միանալ նրան, ով հավերժ լքել է այս աշխարհը: Նմանատիպ ավարտով սուիցիդների կամ սուիցիդալ փորձերի ականատես ենք եղել 1988 թ. դեկտեմբերի 7-ի Սպիտակի երկրաշարժից հետո աղետի գոտու բնակչության շրջանում:

Յուրահատուկ պարտադրված ինքնասպանության տեսակ է քաղաքական իրավիճակի փոփոխմամբ պայմանավորված՝ պաշտոնատար անձանց սուիցիդները, երբ նրանց նախկին գործունեությունը նոր իշխանության կամ իրավապահ մարմինների ուշադրության կենտրոնում է, առավել ևս, երբ անձը այնպիսի վիճակում է, որ իր ցուցմունքից կախված են որոշակի նշանակալի անձի կամ անձանց քաղաքական և իրավական ճակատագրերը: Երբեմն էլ սեփական ժողովրդին կործանման հասցրած առաջնորդն է մղվում նման քայլի՝ նրա ցատումից կամ պատմության դատաստանից խուսափելու նպատակով: Տվյալ դեպքում նման անհատները ծանր են տանում կյանքում տեղի ունեցող դիլեման և առաջնությունը վերապահում են դեստրուկտիվ վարքի ծայրահեղ ձևին: Հիշենք պարտված ֆաշիստական Գերմանիայի պարագլուխների համատարած սուիցիդները:

Մեր ուսումնասիրած մի շարք քրեական գործերից պարզվել է, որ ժամկետային ծառայության մեջ գտնվող զինվորները ինքնասպանություն են գործել պարբերաբար վիրավորանք կրելու, ստորացվելու հետևանքով, այսինքն՝ դրսևորվել է քրեական ենթամշակույթով պարտադր-

ված սուիցիդ: Վերաքննիչ քրեական դատարանում ավարտվել է նախկին զինծառայողներ Հրանտ Կարապետյանի և Ռոբերտ Բաղայանի բերած վերաքննիչ բողոքների քննությունը: Ընդհանուր իրավասության դատարանում ամբաստանյալները երեքն էին: Երրորդ ամբաստանյալը՝ Վիլիելմ Ենգիբարյանը, վերաքննիչ բողոք չէր բերել: Նրա մասով դատավճիռը ուժի մեջ է մտել: Ըստ դատավճռի վաշտի ավագ Վիլիելմ Ենգիբարյանի կոպիտ դիտողությունների ու վատ վերաբերմունքի մասին նրա ստորադրյալ, ժամկետային զինծառայող, շարքային Թորգոմ Սարուխանյանը գանգատվել է գորամասի իրային ծառայության պետին: Վերջինս հանդիմանական հեռախոսագրույց է ունեցել վաշտի ավագ Ենգիբարյանի հետ: 2011 թվականի հունվարի 23-ին ժամը 21-ի սահմաններում Վիլիելմ Ենգիբարյանը վաշտում հեղինակություն վայելողներ Հրանտ Կարապետյանին ու Ռոբերտ Բաղայանին պատմել է Սարուխանյանի արարքի մասին, որը համատեղ որակել են որպես անբարոյականություն: Դատավճռի ձևակերպմամբ՝ Ենգիբարյանը չարաշահել է իր պաշտոնական դիրքը, կատարել իշխանագանցություն, հաշվեհարդար տեսնելու անձնական շահագրգռությունից ելնելով՝ Կարապետյանի ու Բաղայանի հետ բռնություն է գործադրել Սարուխանյանի նկատմամբ: Նրանք հարվածներ են հասցրել զինվորին ստորացրել են Սարուխանյանի պատիվն ու արժանապատվությունը, նվաստացրել նրան, այլ զինվորների ներկայությամբ նշավակել որպես անբարո և մատնիչ: Բացի այդ, ծառայության բերումով պարբերաբար հանդիպելով իր ենթակա, իրենից ծառայողական կախվածության մեջ գտնվող Սարուխանյանին, Ենգիբարյանը շարունակել է չարաշահել իր դիրքը, ցինիկ վերաբերմունք դրսևորել զինվորի նկատմամբ, համաձայնողների ներկայությամբ պարբերաբար անհիմն ստորացրել է նրա պատիվն ու արժանապատվությունը, զրպարտել մատնություն կատարելու համար: Դատական ակտի համաձայն՝ նմանատիպ վարքագիծ են դրսևորել նաև զինծառայողներ Կարապետյանն ու Բաղայանը: Ըստ դատավճռի՝ Սարուխանյանը, այլևս չդիմանալով իր նկատմամբ բազմիցս գործադրված ստորացուցիչ հալածանքներին, 2011 թվականի փետրվարի 12-ին ժամը 16-ն անց 35 րոպեին, գտնվելով պահակային ծառայության մեջ, իրեն ամրակցված ինքնաձիգից պահակակետում մեկ կրակոց է արձակել կրծքավանդակի ձախ շրջանին և ինքնասպան եղել:

Միշտ պետք է հիշել, որ ինքնասպանները դժբախտ մարդիկ են, իսկ ինքնասպանությունը անձի բողոքն է ոչ միայն հասարակության, այլև կյանքի նկատմամբ: Պարտադրված ինքնասպանությունը մահվան ձգտում չէ, այլ նման ձևով ապրել չկարողանալու արտահայտություն կամ ծայրահեղ իրադրությունից դուրս գալու «ոչ լավագույն ելք»:

Պարտադրված սուիցիդը ներկայումս առավել հաճախ հանդիպող ինքնասպանության տեսակներից է: Ընդ որում՝ արտաքին միջամտության առումով այն առավել իներտ է և կայուն: Սուիցիդի նման տեսակը

Խիստ կարևորվում է գիտական առումով, այն սուիցիդի մեկնաբանման տեսանկյունից նոր մոտեցում և նոր ուղի է՝ կարոտ ինքնասպանության խորհրդավորության հաղթահարման և մեկնաբանման: Սուիցիդի սոցիալ-հոգեբանական ոչ ախտաբանական բնույթի, ինչպես նաև սահմանային վիճակներով, գիտակցության և ուշադրության նեղացմամբ պայմանավորված պարտադրված ինքնասպանությունների հոգեբանական մեխանիզմների բացահայտումը, նորովի մեկնաբանումը շրջադարձային բեկում կմտցնեն սուիցիդի հետագա ուսումնասիրության գործընթացում ինչպես նորմայում, այնպես էլ հոգեախտաբանության մեջ: Այն շրջադարձային կդառնա նաև սուիցիդի կանխարգելման և համապատասխան խմբերի անձանց վերականգնման և վերահարմարվելու գործընթացում: Ինչպես սուիցիդի վերոհիշյալ ձևերի, այնպես էլ դրանց դեստրուկտիվ էության բացահայտումը նախասուիցիդալ, սուիցիդալ, իսկ չռեալիզացված սուիցիդի ժամանակ նաև հետսուիցիդային շրջանում մեծ և խոստումնալի հեռանկարներով հղի նորույթ է, նոր ուղղություն ոչ միայն տեսական և կիրառական հոգեբանության, այլև հոգեբուժության բնագավառում և կիրթանի նման վթարի ենթարկված սուիցիդենտների ոչ միայն սանացիան, այլև թերապևտիկ միջամտությունները:

Բանալի բառեր – *պարտադրված սուիցիդ, ավանդույթով, օրենքով, հիվանդությամբ, տնտեսական անհաջողություններով, քրեական ենթամշակույթով, նշանակալի անձի կորստով պարտադրված սուիցիդներ*

КАМО ВАРДАНЫЯН – *Вынужденные суициды.* – Статья посвящена одному из новых ответвлений психологии суицидов, а именно вынужденным самоубийствам. Рассматриваются виды суицидов: вызванные обычаем, законом, болезнью, экономическими неудачами, уголовной субкультурой, потерей знаковой личности. Автор предлагает теоретически обоснованные и практически опробованные подходы, которые могут быть полезны психологам и врачам и позволят предсказывать приближающееся самоубийство (его неизбежность) и принимать превентивные меры для предупреждения суицида и его лечения.

Ключевые слова: *вынужденные суициды, обычаи, закон, болезнь, экономические неудачи, уголовная субкультура, потеря знаковой личности*

КАМО ВАРДАНЫЯН – *Imposed Suicides.* – The scientific paper is devoted to one of the psychological displays of suicide – imposed suicides. Some types of imposed suicide are being suggested, preconditioned by tradition, law, disease, economic failures, criminal subcultures that cause the loss of a great number of people. The author introduces some theoretically grounded and practically tested approaches which will be useful for psychologists, doctors and will give the chance to foresee the coming act of suicide (suicide inevitability) and carry out precautionary (preventive) actions to prevent suicide and to provide treatment.

Key Words: *imposed suicides, suicides imposed by tradition, law, disease, economic failures, criminal subculture, that cause the loss of a great number of people*

Ներկայացվել է՝ 30.07.2020

Գրախոսվել է՝ 08.09.2020

Ընդունվել է տպագրության՝ 18.12.2020